ԸՆԹԱՑԻԿ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ
N 02/22

Ք.Եղեգնաձոր

12.01.2022թ

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանը, ի դեմս Գլխավոր քարտուղար Ա.Կարապետյանի, որը գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա, այսուհետ (Պետական մարմին), մի կողմից և Եղեգնաձորի Մշակույթի կենտրոն ՊՈԱԿ-ը՝ ի դեմս տնօրեն Լ.Զոհրաբյանի, որը գործում է ՊՈԱԿ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ (Կազմակերպություն), մյուս կողմից, այսուհետ միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով նախատեսված համայնքի մշակույթի և ազատ ժամանցի կազմակերպում ծրագրի(ծրագրի դասիչ՝ 1196) շրջանակներում նախատեսված ընթացիկ դրամաշնորհը(այսուհետև՝ դրամաշնորհ) և ղեկավարվելով ՀՀ կառավարության 23.12.2021թ N 2121-ն որոշմամբ՝ կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պետական մարմինը պարտավորվում է ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի 08.02.03.01. «Համայնքի մշակույթի և ազատ ժամանցի կազմակերպում» ծրագրի իրականացման համար սույն պայմանագրի 2.1. կետում նշված միջոցները հատկացնել Կազմակերպությանը, իսկ Կազմակերպությունը ստանձնում է պարտավորություն 2022 թվականի ընթացքում իրականացնել թվով 11 միջոցառում(հանդիսատեսի թվաքանակը՝5035 մարդ) :

2.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

2.1 Սույն պայմանագրով կատարված Աշխատանքի ընդհանուր գինը կազմում է 2964.7երկու միլիոն ինը հարյուր վաթսունչորս հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ, այդ թվում ԱԱՀ 494.0(չորս հարյուր իննսունչորս հազար) ՀՀ դրամ:

2.2 Սույն պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո Պետական մարմինը սույն պայմանագրի 1.1 կետում նշված գումարը փոխանցում է Կազմակերպության գանձապետական հաշվին՝ համաձայն հավելվածի:

3.ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Սույն պայմանագրի 2.1 կետում նշված միջոցները պետք է ծախսվեն բացառապես սույն պայմանագրի 1.1 կետում նշված նպատակներին համապատասխան:

3.2 Կազմակերպությունը պետք է հաշվապահական փաստաթղթերը վարի օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան և ապահովի սույն պայմանագրի 1.1 կետով նախատեսված նպատակների իրականացման հետ կապված փաստաթղթերին ծանոթանալու՝ Պետական մարմնի ներկայացուցչի հնարավորությունը:

3.3 Կազմակերպությունը պարտավոր է յուրաքանչյուր եռամսյակ ներկայացնել հաշվետվություններ համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 2013 թվականի փետրվարի 4-ի թիվ 104-Ն հրամանի և ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվող կազմակերպություններին առընչվող այլ իրավական ակտերի:

4. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4.1. Կողմերը պատասխանատվություն են կրում սույն պայմանագրով նախատեսված պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

5.ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

5.1 Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև 2022 թվականի դեկտեմբերի 25-ը:

5.2 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի համաձայնությամբ, որը կնքվում է գրավոր:

5.3 Սույն պայմանագիրը կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

5.ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՍՑԵՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Վայոց Ձորի մարզպետարան
Ք.Եղեգնաձոր Շահումյան 5
ՀՀ ֆն գործառնական վարչություն
ՀՀ 900351072021

ՀՎՀՀ 08907717

_____Ա.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ
Եղեգնաձորի,,Մշալույթի կենտրոն,, ՊՈԱԿ
Ք.Եղեգնաձոր Մոմիկի 6
ՀՀ ֆն գործառնական վարչություն
ՀՀ 900358000306

ՀՎՀՀ 08900537

_____Լ.ՔՈՀՐԱԲՅԱՆ

Հավելված

11 հունվարի 2022թ կնքված պայմանագրի

NN	Ծառայության անվանումը	2022 թ վճարվելիք գումարները աճողական												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	2	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
1	Ընթացիկ դրամաշնորհներ պետական-համայնքների ոչ առևտրային		266.4	532.8	688.3	1008.0	1273.9	1520.9	1758.1	2015.1	2333.2	2647.5	2964.7	2964.7
	Ընդամենը													

ՀՀ Վայոց ձորի մարզպետարան
ք.Եղեգնաձոր, Շահումյան 5
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900351072021
ՀՎՀՀ 08907717
Մարզպետարանի
գլխավոր քարտուղար
Ա.Կարապետյան

Մշակույթի կենտրոն ՊՈԱԿ
ք. Եղեգնաձոր, Մոմիկի 6
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900358000306
ՀՎՀՀ 08900537
Տնօրեն Ս.Զոհրաբյան